ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի (Բացման նիստի արձանագրություն)

ք. Երևան *20.11.2019թ.*
Ժամը՝ 16:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Անահիտ Մալխասյան*
Անդամներ՝ *Մանուկ Սահակյան*

Դավիթ Խաչատրյան

Լևոն Մուրադյան

Հայկ Խուրշուդյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Հասմիկ Ղազարյան*

Օրակարգ՝

1. Տեղեկություն՝ ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1 Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության 2019 թվականի կարիքների բավարարման համար՝ **հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթների** ձեռքբերման նպատակով **«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/13»** ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հայտը բացվել է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության շենքում, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեում՝ http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով, 2019 թվականի նոյեմբերի 20-ին, ժամը 12:00-ին:

1.2. http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	**Մասնակցի անվանումը**	**Էլ. հասցե**
1	«Շատվոր» ՍՊԸ	arturshatvoryan@yandex.ru

2. Տվյալներ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

2.1 «Շատվոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 Մասնակիցը ներկայացրել է գնային առաջարկ, ինքնարժեքի հաշվարկ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1. Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

5. Տվյալներ նախահաշվային գնի մասին և յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝

	ՀՀ պետ. բյուջեով նախատեսված գինը	Չ/Բ	Առաջարկված գինը		
			Ինքնարժեք	ԱԱՀ	Ընդհանուրը
«Շատվոր» ՍՊԸ	2396100	1	1992080	398416	2390496

6. Տվյալներ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

6.1 Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների՝ հիմք ընդունելով ներկայացրած ամենացածր գնային առաջարկը՝ հանձնաժողովը որոշեց՝

«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-2019/13» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից համարել «Շատվոր» ՍՊԸ-ին:

6.2 Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով /Lena_Najaryan@taxservice.am (հեռ. 060-54-49-71), karine_sargsyan@taxservice.am, էլեկտրոնային փոստի հասցեներին /ՀՀ կառավարությանն առընթեր պետական կոմիտե հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

6.4 Մասնակիցներին ծանուցել մրցույթի արդյունքները և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից պահանջել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

7. **Տեղեկություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ**

Հայտի փոփոխություններ, հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ

8.1 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ե) պարբերության համապատասխան՝ հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան, Մաշտոցի 47 հասցեում՝ 2019 թվականի նոյեմբերի 26-ին, ժամը 14:00-ին:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- *Ա. Մալխասյան*

Անդամներ՝ ---------- *Մ. Սահակյան*

---------- *Դ. Խաչատրյան*

---------- *Լ. Մուրադյան*

---------- *Հ. Խուրշուդյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Հ. Ղազարյան